



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՌԸՆԹԵՐ
ՊԵՏԱԿԱՆ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԿՈՄԻՏԵ
ՆԱԽԱԳԱՀ

«06» հունիսի 2018 թ.

№ 342 - Լ

Հ Ր Ա Մ Ա Ն

ՄԱՔՍԱՅԻՆ ԳՈՐԾԱՌՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՎԱՅՐԵՐԸ
ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով ՀՀ կառավարության 2016 թվականի մարտի 10-ի թիվ 224-Ն որոշմամբ հաստատված կանոնադրության 18-րդ կետի 4-րդ ենթակետով.

Հրամայում եմ՝

1. Սահմանել, որ ապրանքների, միջազգային փոխադրման տրանսպորտային միջոցների և պաշարների (այսուհետ՝ ապրանքներ) մաքսային գործառնություններն իրականացվում են «Եվրասիական տնտեսական միության մաքսային օրենսգրքի մասին» պայմանագրի 1-ին հավելվածով հաստատված Եվրասիական տնտեսական միության մաքսային օրենսգրքի 79-րդ հոդվածով նախատեսված վայրերում՝ հաշվի առնելով սույն հրամանով սահմանված առանձնահատկությունները:

2. Ապրանքների նկատմամբ մաքսային գործառնություններն իրականացվում են վերադաս մաքսային մարմնի հետևյալ կառուցվածքային ստորաբաժանումներում.

1) վերադաս մաքսային մարմնի այն կառուցվածքային ստորաբաժանումում, որը տեղակայված է մաքսային հսկողության ենթակա ապրանքների գտնվելու վայրում կամ վերադաս մաքսային մարմնի այն կառուցվածքային ստորաբաժանումում, որի գործունեության տարածքն ընդգրկում է ապրանքների գտնվելու վայրը կամ տեղափոխվող ապրանքների նշանակման վայրը,

2) վերադաս մաքսային մարմնի այն կառուցվածքային ստորաբաժանումում, որը տեղակայված է մաքսային սահմանով մաքսային հսկողության ենթակա ապրանքների տեղափոխման վայրում կամ վերադաս մաքսային մարմնի այն կառուցվածքային ստորաբաժանումում, որի գործունեության տարածքն ընդգրկում է այդ ապրանքները տեղափոխման վայրը:

3. Եվրասիական տնտեսական միության մաքսային օրենսգրքի 14-րդ և 15-րդ գլուխներով սահմանված՝ ժամանման և մեկնման մաքսային գործառնություններն իրականացվում են սույն հրամանի 2-րդ կետի 2-րդ ենթակետով սահմանված վայրերում:

Եվրասիական տնտեսական միության մաքսային օրենսգրքի 16-րդ, 17-րդ և 18-րդ գլուխներով սահմանված մաքսային գործառնություններն իրականացվում են սույն հրամանի 2-րդ կետի 1-ին ենթակետով սահմանված վայրերում:

4. Անկախ սույն հրամանի 3-րդ կետով սահմանված դրույթներից՝ հայտարարատուի պատճառաբանված դիմումի հիման վրա մաքսային մարմինների թույլտվությամբ Եվրասիական տնտեսական միության մաքսային օրենսգրքի 14-18-րդ գլուխներով սահմանված՝ մաքսային գործառնությունների իրականացման վայրերը կարող են փոփոխվել:

5. Եվրասիական տնտեսական միության և մաքսային կարգավորման վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ նշված դեպքերում մաքսային մարմնի կողմից մաքսային գործառնություններն իրականացվում են այդ իրավական ակտերում նշված վայրերում կամ այդ իրավական ակտերում նշված մաքսային մարմնի կառուցվածքային ստորաբաժանումներում:

6. Մաքսային մարմինների գտնվելու վայրից և (կամ) աշխատանքային ժամերից դուրս մաքսային գործառնությունները կարող են իրականացվել Եվրասիական տնտեսական միության մաքսային օրենսգրքի 79-րդ հոդվածի 2-րդ կետին համապատասխան գործող, այդ թվում՝ նախքան «Եվրասիական տնտեսական միության մաքսային օրենսգրքի մասին» պայմանագիրն ուժի մեջ մտնելը սահմանված՝ վերադաս մաքսային մարմնի ղեկավարի հրամանով նախատեսված վայրերում:

7. Վերադաս մաքսային մարմնի թույլտվությամբ, ապրանքների նկատմամբ մաքսային գործառնությունները կարող են իրականացվել այդ ապրանքների մաքսային հայտարարագիրը գրանցող մաքսային մարմնից տարբերվող մաքսային մարմնում:

8. Այն դեպքերում, երբ ապրանքների ժամանակավոր պահպանությունը մաքսային մարմնի ժամանակավոր պահպանության վայրերում հնարավոր չէ, ապա շահագրգիռ անձի պատճառաբանված պահանջով ապրանքների ժամանակավոր պահպանության հետ կապված առանձին մաքսային գործառնություններ մաքսային մարմինների կողմից կարող են իրականացվել այդ անձանց տարածքներում պայմանով, որ այդ վայրերն անհատույց հանձնվում են մաքսային մարմիններին ժամանակավոր պահպանության ամբողջ ընթացքում:

9. Սահմանել, որ սույն հրամանում կիրառվող հասկացությունները մեկնաբանվում են Եվրասիական տնտեսական միության մաքսային օրենսգրքով սահմանված իմաստներով:

10. Սույն հրամանն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:



Դ. ԱՆԱՅԱՆ

